ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-120-26.04.2019-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ~~հարկային օրենսգրքի~~ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 159-րդ հոդվածը լրացնել նոր՝ ~~5-րդ~~ 3.1-րդ մասով.

«~~5.~~ 3.1 ~~Անկախ սեփականության ձևից՝ ՀՀ-ում~~ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն~~, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական~~ ուսումնական հաստատություններ~~ում~~ի մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորող (ուսանող) վարձու աշխատողի ~~(այդ թվում՝ ծառայություններ մատուցող)~~ ուսման վարձը փոխհատուցվում է սույն օրենսգրքի 160^1 հոդվածով սահմանված կարգով»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել 160^1 հոդվածով.

«Հոդված 160^1 Վճարված եկամտային հարկի գումարներից ուսման վարձի փոխհատուցման նպատակով վարձու աշխատող հանդիսացող ~~(այդ թվում՝ ծառայություններ մատուցող)~~ ֆիզիկական անձի կողմից վճարվող ուսման վարձի գումարի վերադարձը

1.Վարձու աշխատող հանդիսացող ~~(այդ թվում՝ ծառայություններ մատուցող)~~ ֆիզիկական անձանց աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկը ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է՝ ~~անկախ սեփականության ձևից~~ ~~ՀՀ-~~Հայաստանի Հանրապետությունում հավտարմագրված բարձրագույն~~, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական~~ ուսումնական հաստատություններ~~ում~~ի մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորող վարձու աշխատողի ~~(այդ թվում՝ ծառայություններ մատուցող)~~ ~~ուսման վարձի գումարի չափով~~ ուսման համար վճարված գումարի չափով, բայց ոչ ավել, քան համապատասխան տարվա ընթացքում ֆիզիկական անձի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարը:

2. Սույն հոդվածով սահմանված գումարները վերադարձվում են ուսումնական տարվա ~~կիսամյակի~~ ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ~~յուրաքանչյուր~~ տվյալ ուսումնական տարվա համար սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում:

3. Սույն հոդվածով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված մի քանի արտոնությունների հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

4.Սույն օրենքով նախատեսված փոխհատուցման իրավունքից

1) չեն կարող օգտվել ոչ ռեզիդենտ եկամտային հարկ վճարողները,

2) վարձու աշխատող հանդիսացող սովորող ֆիզիկական անձը կարող է օգտվել միայն մեկ անգամ:

5. Սույն հոդվածի նկատմամբ կիրառելի են Օրենսգրքի 160-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, ~~և~~ 3-րդ կետերը~~, ինչպես նաև նույն հոդվածի~~ և 5-րդ մասի 1-ին, ~~և~~ 2-րդ կետերը:

6.Սույն հոդվածով սահմանված՝ վարձու աշխատող հանդիսացող ~~(այդ թվում՝ ծառայություններ մատուցող)~~ ֆիզիկական անձանց փոխհատուցման նպատակով եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն Օրենսգրքի 160[1]–րդ հոդվածով սահմանված ~~Ե~~եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը կառավարությունը սահմանում է մինչև 20~~19~~20թ.-ի օգոստոսի 1-ը: